

375
N_L - 98

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՅՈՑ



ՈՒՍՍԱՆՑ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ
ՎԱՐԺ-ԱՐՄԵԱՅ

Վանեացեալ Ազգ. Կեդր . Վարչութեան
Աւանմանական Խորհրդեան



1909

Տար. Ա., Խ. 2., Տիգ. Կարստական

Գ. ՊՈՂԻՆ

RE MAR 2010

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ

370

1971-ԾԸ

375 ~~375~~
n. 91

ԱՐ ՈՒՍՍԱՆՑ ԾՐԱԳՐ

ՀԱՅՈՅ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Վաւերացեալ յիւսումմական Խորհրդոյ Ազգ.

Կեդր . Վարյութեան



1909

Տալ. Վ. Էւ Հ. Տէ՛րեբուլսեան

Կ. Պոլիս

ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅՈՅ ՄԻԱՑԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԳԻՒՂԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

(7-13 տարեկան տղայոց համար)
Վեց տարեշրջանով. Ա. Բ. Գ. և Դ. Հրջանները
հաշուռած են 8ական ամիս, իսկ Ե. և Զ. Հրջանները
7ական ամիս :

Տղան 7 տարեկան կը մտնէ դպրոց և 13 տարե-
կանին կ'աւարտէ Հրջանը :

Ա. Մ Ա. Բ Մ Ն Ա. Մ Ա. Բ Զ

Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ծանօթ. — Կատարելի ամէն կարգի մարզանքներուն
մէջ նկատի ունինալ տղոց տարիքը, Փիզիքական ուժը,
և ըստ այնմ կանոնաւորել մարզանքներուն տեւողու-
թիւնը, որպէս զի չափէն տեսլի չի յոդնին տղաքը:

1. Երդախառն քալուածք, Հրջապար և խաղ .
2. Կարգ ըլլալ և քալել ոտից մասներուն վրայ .
3. Ցատկրուել .
4. Թեւերով ու զլիսով պարզ մարզանքներ՝ կեցած
տեղը և քալուածքի մէջ .
5. Նմանութիւնը ընել այլիւայլ աշխատութեանց
(զոր օրինակ՝ սղոցել, փորել, անիւ դարձունել, փայտ
կարել, գամ գամել, երկաթ ծեծել, ևն) .
6. Զանազան մարմնակրթական խաղեր՝ ընտրու-
թիւն ընելով տեղականներէն :

ԵՐԿՐՈՐԴԻ ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Կարդ կաղմել և ցրուել .
2. Մէկէ տեղի կարգերու վրայ շարուիլ .
3. Համաչափ քայլափոխով ընթացք .
4. Երգելով քալել՝ շրջանակաձև, պարուրաձև և ոլորապարույտ .
5. Կեցած տեղը վազելու շարժումներ կատարել ։ նոյն շարժումները կատարել վորքաթիւ խումբերով .
6. Յատկրտել և ցատկել .
7. Անդամներու և իրանի պարզ մարզանքներ .
8. Զանազան աշխատութեանց նմանութիւնը ընել, մասնաւորաբար տեղական աշխատութիւններէն .
9. Հաստատուն ձողէ մը կամ ճիւղէ մը կախուելու մարզանքներ՝ ոտքը գետինը դպչելու պայմանաւ .
10. Զանազան խաղեր :

ԵՐՐՈՐԴԻ ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Կարդ կաղմել և ցրուել .
2. Կարդին մէջ նշանակել զոյդերն ու անզոյդները .
3. Զոյդ կաղմել և քալել՝ միաշար գծով .
4. Դէպի աջ կամ դէպի ձախ, դէպ առաջ կամ դէպ հատե քայլափոխ՝ քալելու կամ վազելու մէջ . հաս մաչափ վաղք .
5. Յատկրտել և ցատկել .
6. Կրկնութիւն կախման նախորդ տարւոյ մարզանքներուն և աղատ մարզանքներ կախման .
7. Զանազան խաղեր բաց օդին մէջ կամ յարկածածուկ տեղւոյ մէջ :

ՉՈՐՐՈՐԴԻ ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Կարդ ըլլալ և ցրուիլ .
2. Կարգին մէջ նշանակել զոյդերն ու անզոյդները .
3. Մէկ գծի վրայ կարդ կենալու վարժութիւն .
4. Զոյդ կաղմել ու քալել՝ միաշար գծով .
5. Հեռաւորութիւն առնել .
6. Կարգի մէջ տեղափոխութիւններ կատարելու վարժութիւն .
7. Արագ քայլընթացք .
8. Սրունքներու, թեւերու և իրանի մարզանք .
9. Նախապատրաստական մարզանք ոստումի . ոստում .
10. Զանազան խաղեր բաց օդին մէջ կամ յարկածածուկ տեղւոյ մէջ .
11. Մագլցելու վարժութիւն :

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Կրկնութիւն նախորդ տարւոյ մարզանքներուն .
2. Զուգորդութիւն՝ թեւերով, սրունքներով և իրանով կատարելի մարզանքներու .
3. Տեղական պարերու վարժութիւնք :

ՎԵՅՏԵՐՈՐԴԻ ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Կրկնութիւն նախորդ տարւոյ մարզանքներուն .
2. Ոստում ըստ երկայնութեան . ըստ բարձրութեան՝ ոստքերը քովէ քով, և չափաւոր ոստումներ ըստ խորութեան .
3. Տեղական պարերու վարժութիւնք :

Բ. ԶԵՐԱԿԱՆ ՍԵԽԱՎԵՐԻ ԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇԹԱՋԱՆ

1. Ուլունք շարել.
 2. Հաստ թուղթը ծակծկել և թելով բանիլ վրան.
 3. Ոստայնանկելու վարժութիւնք ծառի ոստերով, ծզօտներով և փայտի չերտերով (իրը նախապատրաստական վարժութիւն կողովագործութեան).
 4. Ծալլում թուղթերով.
 5. Պարտիզամշակութիւն:
-

Բ. ՏԱՐԵՇԹԱՋԱՆ

1. Ուլունք շարել.
 2. Հաստ թուղթի և խոշորահիւս կտաւի վրայ առեղով բանիլ.
 3. Ոստայնանկելու վարժութիւն.
 4. Ծալլում և կարասում թղթերով.
 5. Կաղապարում կամ մեղրամումով:
-

Գ. ՏԱՐԵՇԹԱՋԱՆ

1. Երկրաչափական մակերեւոյթներ չինել արամադրելի յարմար նիւթերով (քառակուսի, ուղղանկիւն, եռանկիւն, արապէջ, բոլորակ).
2. Վերոյիշեալ ձեւերը կիրարեկել կեանքի սովորական պէտքերուն (գիրքի և աետրակի կողք չինել, սեղանի երեսներ, աթոռակի նստարաններ, ածուի ձեւեր, ևն).
3. Թուղթի երիդներով աշխատութիւնք. երկայնութիւն մը բաժնել 2, 4, 8 հաւասար մասերու, իրա-

րու հետ բաղդատել կողմերուն, առանցքներուն և անկիւնագիծերուն երկայնութիւնները քառակուսի և ուղղանկիւն ձեւերու մէջ.

4. Ոստայնանկում:

Դ. ՏԱՐԵՇԹԱՋԱՆ

1. Ծալլումի, կտրատումի և սոսընձումի վարժութիւններ.
 2. Նամակի պահարան, պիտակ, քսակ չինել.
 3. Բազմանկիւնային մակերեւոյթներ չինել, ձեւել և չափել.
 4. Տնկարանի գործիքներուն և տունկերուն վրայ ծանօթութիւն.
 5. Բազմացումի եղանակներ.—Աղուրի, չաղ և տեղափոխում.
 6. Գետինը մաքուր պահել, մոլի խոտերը քաղել, հողը փոցիսել:
-

Ե. ՏԱՐԵՇԹԱՋԱՆ

1. Խաւաքարտով կամ թուղթով չինել ծաղկի թերթերու և տերեւի զանազան ձեւեր, ձուաձեւ, թերատաձեւ, պարուրաձեւ.
2. Կաւով կամ գաճով ձեւակերպում գործածական առարկաներու (պտուկ, կճիճ, բղուկ, սափոր, պնակ, սկուտեղ, աշտանակ, կանթեղ, ևն).
3. Կաւով կամ գաճով չինել երկրաչափական հաստատուններ՝ տուեալ չափերով (խորանարդ, զուգահեռուսն, սղիզմակ, զլան, բուրգ, կոն և գունտ).
4. Կուտերու և կորիգներու խաւ ի խաւ տնկում, խորաներկ, ցան, հող և պարարտութիւնք.—Արմա-

տախիլ ընել և անկել . — Պատուաստ , պատուաստէ ետք խնամք . — Պառկները կտրել , ճիւղերը պատին կապել . — Յօտել , հարկանեխում :

2. ՏԱՐԵՇԻՉԱՆ

Կրկնութիւն նախընթաց տարւոյ նիւթերուն :

Գ. ԳՅՈՒԳԻՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԵՇԻՉԱՆ

1. Նախապատրաստութիւն գաւաղանիկներու , կաւարներու և օղակներու միջոցաւ .

2. Քառանկիւնագիծ կամ կէտանիշ թղթի վրայ , գրատախտակի , քարետախտակի վրայ՝ առանց գծագրական դործիքի գծագրութիւն .

3. Գործածական շատ պարզ առարկաներու գծագրութիւն՝ ուսուցչին ձեռքով գրատախտակին վրայ շինուած ուրուագին հետեւողութեամբ .

4. Ծալլումէ առաջ եկած ձեւերու գծագրութիւն .

5. Ցիշողութեամբ գծագրութիւն .

6. Աղատ հնարողութեամբ գծագրութիւն :

Բ. ՏԱՐԵՇԻՉԱՆ

1. Առանց գծագրական դործիքի , գրատախտակին վրայ և կէտանիշ կամ քառանկիւնագիծ թղթի վրայ գծագրութիւն .

2. Կինդանիներու , տերեւներու , պտուղներու և գործածական առարկաներու ուրուագիծ .

3. Ծալլումէ և կտրատումէ յառաջ եկած ձեւերու գծագրում .

4. Ուղիղ գծերու իրարու հետ զուգորդութեամբ ձեւերու յօրինում .

Կոր գծերու իրարու հետ զուգորդութեամբ ձեւերու յօրինում .

Ուղիղ և կոր գծերու իրարու հետ զուգորդութեամբ ձեւերու յօրինում .

5. Ցիշողութեամբ գծագրութիւն :

Գ. ՏԱՐԵՇԻՉԱՆ

1. Իրագիտութեան և տեղական աշխարհագրութեան ընծայած նիւթոց գծագրութիւն՝ շատ պարզ ուրուագիծի մը հետեւողութեամբ .

2. Խւզագածիգ , հորիզոնական և շեղ գիծեր քաշել .

3. Գիծ մը բաժնել 2, 4, 8 հատամար մասերու .

4. Տարրական գարդանկարի վարժութիւններ .

5. Իրաղննական ծանօթութիւնք քառակուսիի և ուղղանկիւնի վրայ .

6. Անոնց առանցքներուն և անկիւնագիծներուն միջոցաւ առաջ եկած բաժանումներուն իրալու հետ բաղդատութիւնը .

7. Իրաղննական ծանօթութիւնք եռանկիւնի (իրահակներով) և զուգաչափ արագէզի վրայ .

8. Գործածական առարկաներու գծագրութիւն՝ ուղղագիծ հատածի համեմատ միայն , իբր կիրարկութիւն ստացուած ծանօթութեանց .

9. Մէգրէն աւելի պղտիկ , և որոշ թուով տէսմէզը պարունակող երկայնութիւններ հաշուելու վարժութիւնք .

10. Ցիշողութեամբ գծագրութիւն :

Դ. ՏԱՐԵՇԻՋԱՆ

1. Ռւղիղ անկիւն, սուր անկիւն և բութ անկիւն.
2. Ռւղղահայեցներ և զուգահեռականներ.
3. Գիծերը բամնել 2, 4, 8, 16.—3, 6, 12.—5, 10 հաւասար մասերու.
4. Հաւասարակողմ եռանկիւն.
5. Զուգահեռագիծ. Տարանկիւն.
6. Քառակուսիի ներփակ ութանկիւն.—Շրջանակի ներփակ կանոնաւոր բազմանկիւններ.
7. Տղուն ծանօթ ձեւերուն կիրառումը՝ այլեւազլ առարկաներու յատակագիծը և ուղղաձիգ հատածը միայն գծելու համար.
8. Աստղակերպ բազմանկիւններ, վարդաձեւեր և ծաղիկներ.
9. Զարդանկարի տարրական վարժութիւնք.
10. Յիշողութեամբ գծազրութիւն:

Ե. ՏԱՐԵՇԻՋԱՆ

1. Տերեւներու և ծաղիկներու ձեւի ուսում.
2. Շրջանակէ զատ կանոնաւոր կոր գծերու գծում՝ առանց գործիքի.—Չուաձեւ, թերատաձեւ, պարուրաձեւ.
3. Ստացուած գիտելիքներու կիրառումը՝ գծելու համար ամաներ, կոպղարարական առարկաներ, երկրագործական գործիներ (Մանջերու բաժին).—Նոյն գիտելեաց կիրառումը՝ գծելու համար ասեղնազործութեան վերաբերեալ աշխատութիւններ (Աղջկանց բաժին).
4. Տարրական հեռապատկերի զնութիւն՝ երկրա-չափական պարզ մարմիններու կամ անոնցմէ ածանցուած

- առարկաներու գծմանը կիրարկուած.—Խորանարդ, պրիզ-մակ, գլան, բուրդ, կոն, գունա.
5. Գործածութիւն քանակի, ուղղաչափի և կարկի-նի գծելու համար երկրաչափական ձեւեր.
 6. Պարզ առարկաներու չափանչուած ուրուագիծ.
 7. Վերածման աստիճանի ծանօթութիւն.
 8. Կալուածի մը յատակագիծը հանելու համար կա-րեւոր եղող տարրական գիտելիք.
 9. Որոշ աստիճանի մը և չափանչուած ուրուագիծի մը համեմատ յատակագիծի մը մաքուրը առնել.
 10. Լոյսի ազդեցութեան վրայ մէկ քանի գիտելիք.
 11. Յիշողութեամբ գծազրութիւն:

Զ. ՏԱՐԵՇԻՋԱՆ

Կրկնութիւն նախընթաց տարւոյ, ըստ կարելոյն գործնական կերպով:

Դ. Գ. Բ. Վ. Ա. Բ. Ռ. Ժ. Ո. Ի. Թ. Ի. Խ

Ա. Ե. Բ. ՏԱՐԵՇԻՋԱՆ

Ռւղիղ գիր գրաստախտակի վրայ կաւիճով և թղթի վրայ մատիտով. բառերու կազմութիւն:

Գ. Ե. Բ. ՏԱՐԵՇԻՋԱՆ

Ռւղիղ կամ հակեալ պարզ գիր. նախաղասութեանց կազմութիւն. պարզ զինազրի ուսում:

Ե. Ե. Զ. ՏԱՐԵՇԻՋԱՆ

Ռւղիղ և հակեալ պարզ գիր, նրբագիր, դիմագիր.—

Մասնաւոր աշխատութիւննք (Ցուցակի, Հաշուեցուցակի, Աղջի, ևն պատրաստութիւն)։

Ե. Ե Բ Գ

Ա. Ե Կ Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Պարզ երգերու վարժութիւն ունկնդրութեամբ. առանձին և խմբովին երգել։

Գ. Ե Կ Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Աշխարհիկ եւ եկեղեցական երգերու վարժութիւն ունկնդրութեամբ. առանձին և խմբովին երգել։

Ե. Ե Խ Զ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Երկճայն երգերու վարժութիւն՝ ունկնդրութեամբ.
2. Եկեղեցական երգերու վարժութիւն, ըստ աւուր պատշաճի։

Զ. Ի Բ Ա Գ Ի Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Դպրոցը եւ հայրենի տունը. — Դպրոցական առարկաներ, կարասիներ, գործիքներ, ընտանի կենդանիներ, բանջարեղիններ, ծաղիկներ, պաղատու ծառեր. — Մարդկային մարմինը։

Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Մարզագետին. — Ծաղիկները և կենդանիները.
2. Այզի եւ պարեկ. — Որթատունկ, պաղատու եւ

ուրիշ ծառեր, անոնց արտադրութիւնները, վեասակաբ կենդանիներ այդիի և պարտէզի մէջ.

3. Շինուրիւնի. — Տեղական քարեր և հողեր։

Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Դաշ . — Մշակեալ տունկեր (ցորեն, գարի, գետնախնձոր, եգիպտացորեն, ևն)։

2. Անտառ. — Ծառերը, բոյսերը և կենդանիները.

3. Շինուրիւնի. — Աւազ, կիր, կաւ, գաճաքար։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆՔ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԾԱՆՈՅթՈՒԹԻՒՆՆՔ

Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Բնական գիտուրիւնի. — Զուրեր. — 1. Հեղեղ. — 2. Գետակ. կենդանիներ. — 3. Գետ. կենդանիներ. — 4. Լիճ. կենդանիներ. — 5. Ծով. կենդանիներ: Ճահիճ. — Բոյսեր և կենդանիներ։

Շինուրիւնի. — Գործածական մետաղներ։

Երկրագործական ծանօթուրիւնի. — Հող. — Մշակելի հողը կաղմող մասերը — ամուլ հողերը բարելաւելու միջոցներ. — Բոյսերու մննդեան պէտքին վրայ յմնլով՝ արաերը պարարացնելու անհրաժեշտ պէտքը և աղբերու գործածութիւնը — աղբերու տեսակները (կենդանական, բուսական և հանքային) — ասոնց պահպանման ու գործածութեան լաւագոյն եղանակները։

Հերկում և նորա յարակից գործողութիւնք — Հին և նոր գրութեամբ հերկման տարբերութիւնները և փերջնոյն առաւելութիւնները. — Եւրոպական արօրը և իւր մասերը, սորա գործածման եղանակը. — Հողի կոյտերը փշելու գործիք (herse), սերմնացու հոնաերը դտելու

ու մաքրելու անհրաժեշտ պէտքը և այս մասին գործածուելիք մեքենաները . — Հունձքի և կալի մեքենաներ :

Ե. ՏԱՐԵՇՔԱՆ

Բնական գիտութիւնն . — Փայտի և յարի աշխատուրիւնն . — Կահազործ , աստղագործ , քարակոփ , ևն :

Տայուրիւն . — Զերմաշափ , մարմիններու ընդլայնումը :

Զուր . — Բաղադրութիւնը և զանազան վիճակները , խտացում , մշուշ , ամպ , անձրեւ , ևն . — Զուրը իբրեւ շարժիչ զօրութիւն . շոգեշարժ մեքենայ :

Օդ . — Յատկութիւնները և բաղադրութիւնները , ևն . — Հով , մթնոլորտական ձնշում , ծանրաշափ , ջրհան :

Երկրագործական ծանօթութիւնն . — Գլխաւոր բոյսերու մշակութիւն և ասոնց իրարու յաջորդելու պէտքն ու կարեւորութիւնը . — Հայտատիկներ (ցորեն , գարի , վարսակ , հաճար , եղիպտացորեն , թռչնակեր , կորեկ , բրինձ , ևն) :

Ճարտարարուեստական բայսեր (ծխախոտ , բամպակ , շուշմայ , սիսամ , խաշխաշ , կանեփ , վուշ , ձախնդեղ , բամի , ևն) :

Մարդագետինք և գլխաւոր ճարտակաբոյսք (առւոյտ , երեխակ , իդիսար ևն) . մարդագետինները ուսողելու և սրհապանելու կերպերը — բնական և արուեստական մարդագետինք :

Պաղատու ծառեր (խնձորենի , տանձենի , սերկեւիլի , արմաւենի , ձիթենի , թղենի , նոնենի , որթատունկ , թթենի և այլք , և անոնց մշակութեան կերպերը :

Բանջարեղինք , սոյա թուռումն և կարեւորութիւնը : Անտառներու պահպանման կարեւորութիւնը . —

Գլխաւոր բուռոց , ծառոց և հացահատիկներու ըլլան մնկալին , ըլլան միջառային՝ հիւանդութիւնները եւ սոցա դարմանները :

Զ. ՏԱՐԵՇՔԱՆ

Բնական գիտութիւնն . — Երկարի վրայ աշխատութիւնն . — Դարբին , երկաթագործ , սայլագործ , պայտառ , ևն : Կողմնացոյց . — Մագնիս , փոթորիկ , ելեկտրականութիւն :

Զայն :

Լծակներ , ճախարակներ :

Զեռուցում եւ լրաւառում . — Զեռուցման զանազան տեսակ փայտեր . Ածուխ , կիզանող . — Ալյում . Մոմ , Քարիւղ , Լուսաւորութեան կաղ , Ելեքտրական լոյս :

Հեռագիր եւ հեռաձայն (պատահաբար) :

Տեղական յատարաւթիւնն :

Մարդկային մարմին . — Ծանօթութիւնք Բնախօսութեան , Մարդակաղմութեան և Առողջապահութեան վրայ (կերակուրք , ըմակնիք և հագուստք , մաքրութիւն , տարափոխիկ հիւանդութիւնք) :

Երկրագործական ծանօթութիւնն . — Բնտանի կենդանիք . հաւ , մեղու , շերամ , ոչխար , այծ , կոլ , եղ , գոմէշ , էշ , ձի , շուն , նապաստակ , ևն . — Ասոնց մնունդը և բաղմացնելու կերպերը . — Հիւանդութիւնները :

Հաւկիթ պահելու կերպը :

Մեղու պահելու և մեղք հասցնելու եղանակը :

Երամ մնուցմանելու եղանակի գործածութիւնը :

Քացախ և դիմի, բէքմէզ և պուլամայ շինելու
կերպերը :

Մածուն, պանիր և կարագ շինելու կերպերը :
Բանջարեղինի պահածոներ :

F. Է. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԵՇԲԱՆ

- Դպրոցը .— Շէնքը . Ռւսոցիչը . Աշակերտները .
- Հայրենի տունը .— Բնակարան . Ծնուանիք . Առանին զբաղութիւնը .— Պարտէզ .— Գաւիթ .— Ամբարանոց .— Ախոռ .
- Մրգաւան .— Պաղատու ծառեր , Ծնուանի կինդանիներ :

Բ. ՏԱՐԵՇԲԱՆ

- Ծննդավայր .— Շէնքեր .— Փողոցներ .— Հրապարակներ .— Աղբերիներ .— Երկրիս չորս կողմերը .— Յատակագիծը ներկայացնել և բացատրել .

- Հողին ելեւէջները .— Ջրոյ ընթացքներ .— Հաղորդակցութեան ճամբաներ .— Մշակութիւններ .— Կենդանիներ (ծննդավայրին մէջ) .

- Բնակիչներ .— Բարքեր .— Զբաղութիւններ .— Արձեստներ .— Սրատաքին յարաբերութիւններ (ծննդավայրին մէջ) .

- Երկինք .— Շատ պարզ դիտողութիւններ արեւուն , լուսնին և մի քանի աստղերու ընթացքին վրայ .— Երկրագունա . Գիշեր և ցերեկ .— Եղանակները և ամիսները .— Անձրեւ , ձիւն , հովեր :

Գ. ՏԱՐԵՇԲԱՆ

1. Տեղական աշխարհագրութիւնը . Ծնդլայնել նըկարագրելով գետակը , լիճը , լեռները , գաւառը , ևն որո՞ք կրնան տեսնուիլ ծննդավայրէն կամ անոր շրջականերէն .

2. Տղուն պատկանած նահանգին բնական աշխարհագրութիւնը .— Քարտէզը ներկայացնել , բացատրել և գծել տալ .

3. Նահանգին վարչային բաժանումները .— Գլխաւոր քաղաքներ :

Դ. ՏԱՐԵՇԲԱՆ

1. Տղուն պատկանած նահանգին շրջակայ կամ կցորդ միւս նահանգներուն բնական աշխարհագրութիւնը .

Անոնց բնակիչները .— Բարք , տարագ , լեզու , զբաղում , արհեստ , առեւտուր , երկրագործութիւն , ևն .

Կարեւոր քաղաքները , անոնց յարաբերութիւնները .— Հաղորդակցութեան միջոցները .

2. Ծանօթ նահանգներուն հետզհետէ կցորդել միւս նահանգներուն ուսումը ըստ վերնոյն՝ մինչեւ որ ուսուցուի ամբողջ Ասիական թուրքիան Քարտիզագծութեամբ :

Ե. ՏԱՐԵՇԲԱՆ

1. Ասիական թուրքիոյ շրջակայ երկիրները .— Բընակիչները , կենդանիները , բոյսերը .— Հաղորդակցութեան միջոցները , արհեստները և առեւտուրները .

2. Եւրոպական թուրքիա .

3. Համառօտ գաղափար . Երկրագործութիւններուն վրայ՝ Երկրագունատին միջոցաւ .

— № — 7/1 1922

Ա. ՄԱՆՈՒԿԻԱՆԱ ԿԱՆԱԿԻԱՆԱ Ա. ՄԱՆՈՒԿԻԱՆԱ ԿԱՆԱԿԻԱՆԱ

4. Ասիական և Եւրոպական թուրքիոյ կարեւոր նահանգներուն վրայ լրացուցիչ տեղեկութիւններ :

Զ. ՏԱՐԵԾՐՁԱՆ

1. Աշխարհի զանազան մասերուն մէջ գործադրութեան լաւագոյն կերպերը այն ճարաւարագործութեանց որոնք յատուկ են մասնաւորապէս տղուն բնակած նահանգին և ընդհանրապէս ամբողջ թուրքիոյ .

2. Մտաւոր ճամբորգութիւններ աշխարհի զանազան մասերուն մէջ յամաքէն և ծովէն :

Բ. ԿԲ 0 Ն Ա Վ Ա Ն Գ Ա Ս Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԵԾՐՁԱՆ

1. Փոքրիկ աղօթք բացարուած և ՚ի բերան ուսւցուած .

2. Զննական շատ պարզ գասիր զիւղի եկեղեցին և անոր պաշտօնէից վրայ (եկեղեցին մասերը, կազմածքը և սպասները .—Քահանային, սարկաւագին, գըպիներուն, լուսաբարին և ժամակոչին տարագը, պաշտօնը) :

Բ. ՏԱՐԵԾՐՁԱՆ

1. Վերատեսութիւն նախորդ տարւոյ դասերուն .

2. Ստեղծագործութիւն (համաօօ) .— Դրախտ .— Աղամ ու Եւա կը խարուին .— Կայէն և Արէլ .— Զրհեղեղ .

3. Նահասպետք .— Արբահամ, Խահակ .

4. Յիսուսի ծնունդը .— Յիսուս տաներկու տարեկան .— Յովհաննէս Մկրտիչ .— Յիսուսի մկրտութիւնը .— Առաջին աշակերտները .— Կանայի հարսանիքը .— Յիսուս

և Սամարացի կինը .— Յիսուս Նազարէթի Տաճարին մէջ .— Անդամալոյծին և Բեթհեղդայի հիւանդին բգըշ-կութիւնը .— Հարիւրապեալին ծառան Կափառնայումի մէջ .— Նային քաղաքի պատանին և Յայրոսի աղջկան յարութիւնը :

Պատարազի երգեր .— 1. Տէր Աղօրմեա, 2. Յիշեա Տէր և ողօրմեա, 3. Կեցո Տէր և ողօրմեա, 4. Եւ ընդհոգւոյդ Քում, 5. Աստուծոյ երկրագեսցուք, 6. Առաջի քո Տէր, 7. Պոսումումէջ, 8. Ամէն, Հայր սուրբ, Որդիկ սուրբ, Հոգիկ սուրբ, 9. Միայն սուրբ, միայն Տէր . . . , 10. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր . . . , 11. Փառաւորեալ և օրհնեալ . . . :

Գ. ՏԱՐԵԾՐՁԱՆ

1. Նահասպետք (շար.) .— Եսաւ և Յակով .— Յակոբի փախուստը .— Յակոբ Լաբանի քով .— Յակոբի վերադը .— Յովսէփի և իր եղբայրները .— Յովսէփի Եղիպատոսի մէջ .— Յակոբ Եղիպատոս կուզայ:

2. Յիսուսի խօսած առակները . Սերմնացանին, Յուրենին և Որոմին առակները .— Լերան քարոզը (կարդալ) . Տէրունական աղօթք .— Յիսուս կը հանդարանցնէ վոթորիկը .— Հինգ հացին և երկու ձուկին հրաշքը .— Բարի Սամարացին, Մեծատունին, Աղքատ Ղաղարոսին, Անառակ Որդիին, Փարիսեցին և Մաքսաւորին առակները ու Ղաղարու յարութիւնը .

3. Յիսուս և Արգար .— Արգար և Թաղէս .— Սանդուխտ կոյս .— Տրգատ և Գրիգոր Լուսաւորիչ .— Հոփիսիմեան կուսանք .

4. Եկեղեցւոյ հայրերու աղօթքներէն ընտրութեամբ Պոց սորվեցունել հանդերձ բացաբութեամբ :

Պատարագի երգեր. — 1. Փառք քեզ, Տէր Առտուած մեր, 2. Եղիցի անուն Տեառն օրհնեալ..., 3. Բարեխօսութեամբ վերին Քո զօրաց..., 4. Սրի Առտուած հարցն մերոց..., 5. Աստուած մեր և Տէր մեր երեւացաւ..., 6. Քրիստոս ՚ի մէջ մերյայտնեցաւ..., 7. Ողջոյն տուք միմեանց..., 8. Խունկ մատուցանեմք..., 9. Մի ոք յերեխայից....

Գ. ՏԱՐԵՇԹՁԱՆ

1. Մոլսէս և Դատառները. — Իսրայէլի ժողովուրդ Եղիպատոսի մէջ. — Մոլսէս. ծնունդը, երիտասարդութիւնը, փախուսաը. — Մոլսէս Փառաւոնի առջեւ. — Եղիպտոսէն ելքը. — Իսրայէլացիները անսապատին մէջ. — Տաննաբանեայ Պատուիրան. — Ռոկիէ հորթը. — Լրտեսները. — Մոլսէսի մահը. — Յեսու, Քանանի երկրին նուածումը. — Գէթէոն, Սամսոն, Հռութ. — Հողի և Սամուէլ.

2. Յիսուս ի Բերանիա. — Յիսուսի մուտքն յերտասպէմ. — Մշակներուն, Տար կուսանաց և Տաղանդներուն առակները. — Յուդայի մատութիւնը. — Հարկան կեսար. — Այրիին լուման. — Յիսուսի չարչարանքը. — Յարութիւնը և Համբարձումը.

3. Քրիստոնէութեան Հայոց մէջ հաստատութեան պատութիւնը. — Հայաստանեայց Եկեղեցին և իր Սուրբերը.

4. Եկեղեցւոյ Հայրերուն աղօթքներէն ընտրութեամբ սորվեցունել՝ հանդերձ բացատրութեամբ:

Պատարագի երգեր. — 1. Սուրբ, Սուրբ..., 2. Յամնայնի..., 3. Որդի Աստուծոյ..., 4. Հողի Աստուծոյ..., 5. Գոհանամք զքէն..., 6. Լցաք ՚ի բարութեանց..., 7. Մարմին Տէրունական..., 8. Թա-

գաւոր Կրկնաւոր..., 9. Խորհուրդ խորին...:

Ե. ՏԱՐԵՇԹՁԱՆ

1. Թագաւորի. — Սաւուղ. — Դասիթ. — Սողոմոն. — Թագաւորութեան բաժանումը. — Մարգարէներ. — Գերութիւն.

2. Առաքեալի. — Քրիստոնէական Եկեղեցւոյ հիմնարկութիւնը. — Սուրբ Հողին Կիջնէ Առաքելոց վրայ. — Առաքեալներու հալածանքը. — Պօղոս Առաքեալին գլխաւոր ճամբորգութիւնները.

3. Հայ Եկեղեցւոյ մեծանուն Հայրապետք և Թարգմանիչք.

4. Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն (Հաւատալիք Եկեղեցւոյ, Խորհուրդք Եկեղեցւոյ, Քրիստոնէական առաքենութիւնք և Եօթն Մահացու Մեղքեր):

Նարականելեր. — Ա. Էջմիածնի. ա) Էջմիածնն ի Հօրէ..., բ) Տեսեալ զլոյս..., գ) Եկայք շինեայուաք...: Վարդանանց. — Նորահրաշ պատկաւոր..., առաջին երկու տուները: Ղետնղեանց. — «Որք չուեալ, զնացեալ լինէին»..., երեք տուն:

Զ. ՏԱՐԵՇԹՁԱՆ

1. Քրիստոնէութեան գլխաւոր բաժանումները. 2. Հայ Եկեղեցւոյ Պատրիարքական և Կաթողիկոսական Սթոռները.

3. Եկեղեցւոյ Հայրերու աղօթքներէն ընտրութեամբ գոց սորվեցունել՝ հանդերձ բացատրութեամբ:

Նարականելեր. — Հոիիսիսնեանց. — «Անձինք նուիրեալըք» և Հ. Փ. տուները: Յարութեան. — «Այսօր յարեաւ...», երեք տուն: Ծննդեան. — «Խորհուրդ մեծ և

սքանչելի...» , երեք տուն : Լուսաւորչի .— «Այսօր զուարծացեալ...» , մէկ տուն :

Ծախօք . — Կրօնագիտութեան ուսուցիչը կամ Հայերէնի ուսուցիչը կը բացարձէ աշակերտաց , յետոյ գոց կը սորվեցունէ բնագիրը , անկէ ետք երածտութեան ուսուցիչը կը սորվեցունէ եղանակը :

Թ . թ Ա Ա Բ Ա Ն Ա Ի Թ Ի Ի Ն , Ե Բ Կ Բ Ա Զ Ա Փ Ա Ի Թ Ի Ի Ն
Ե Կ Տ Ա Մ Ա Բ Ա Կ Ա Լ Ա Ի Թ Ի Ի Ն

Ա . Տ Ա Բ Ե Շ Բ Ա Ն

Թուաբանութիւն .— 1 . Ծանօթութիւն միտթեան և բազմաթուութեան վրայ .

2 . Իրազնական միջոցներով հաշուելու վարժութիւն 1—10 թուոց . մտաւոր ու դրաւոր չորս գործողութիւն առաջին տասը թուոց վրայ՝ գործածութեամբ +, —, = նաևներու .

3 . 1/2փ , 1/4փ , 1/8փ ծանօթութիւն մտաւոր :

Երկրաչափութիւն .— 1 . Ծանօթութիւնք հաստատնոց , մակերեւոյթներու , գիծերու և կէտի վրայ .

2 . Պարզ ձեւերու վերլուծում և բաղդատաթիւն :

Բ . Տ Ա Բ Ե Շ Բ Ա Ն

Թուաբանութիւն .— 1 . Իրազնական ծանօթութիւն 1—10 և 1—20 թիւերու վրայ .— Սոյն թիւերը կազմել և վերլուծել .

2 . 1—10 և 10—20 թուոց վրայ Յաւելման և Բարձման բերանացի վարժութիւններ թանձրացեալ և վերացեալ կերպով .

3 . 1—20 թուոց վրայ Յաւելման և Բարձման գրաւոր վարժութիւնք թուաբանական նշաններու միջոցաւ .

4 . Մտաւոր վարժութիւնք Բազմապատկութեան և Բաժմանման վրայ և ծանօթութիւն × , ÷ , ÷ նշաններու .

5 . Վարժութիւն 1/2փ , 1/4փ , 1/8փ և 1/16փ մտաւոր :
Երկրաչափութիւն .— 1 . Կէտերու և գիծերու միջոցաւ մակերեւոյթներ կազմել .

2 . Ծալլումով և կտրատումով մակերեւոյթներ կազմել .

3 . Կաւով կամ ուրիշ յարմար նիւթով մը պարզ ձեւուցող հաստատաներ կազմել (գունտ , խորանարդ , սլիմակ , ևն) :

(Տես Զեռական աշխատութեան և Գծագրութեան դասերը Բ . ատրեւոյթաններուն մէջ) :

Գ . Տ Ա Բ Ե Շ Բ Ա Ն

Թուաբանութիւն .— 1 . 1—100 թւեր . իրաքանչիւր տանեակի վրայ իրազնական ուսում .— Թանձրացեալ և վերացեալ վարժութիւններ Յաւելման և Բարձման՝ իրաքանչիւր յաջորդական տասնեակի վրայ .

2 . Որոշ թուով միտթիւններ կամ ամբողջական տանեակներ բազմապատկել և բաժնել 2, 4, 8, 10, 5, 3, 6, 9, 7 թիւերով .

3 . Իրազնական դաս տեղւոյն մէջ գործածուած երկայնութեանց և արէքի չափերուն վրայ . սովորեցունել անոնց միտթեան հետ զիսաւոր բազմապատիկներն ու ստորաբաժնութեանը .

4 . Վարժութիւններ դասարանին մէջ գանուած առարկաներն ու կարասիները չափելու՝ տեղական չա-

փերով. ինդիբներու միջոցաւ վարժութիւնք արժէքի չափերու վրայ:

Երկրաչափութիւն. — Քառակուսի հետի մը մակերեւոյթը բաղդասել և ունկիւն, ուղղանկիւն և տրապէզ մակերեւոյթներու հետ որոնք անկէ մեծ ըլլան (Տես Գծագրութեան դասերուն Գ. տարին):

Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Թուաբանութիւն. — 1—1000 թիւեր. — 1. Իւրաքանչիւր հարիւրեակի կազմութիւնը սորվեցունել յաջորդական կարգով.

2. Տղուն ծանօթ հարիւրեակներուն վրայ թանձրացեալ և վերացեալ աստիճանաւոր վարժութիւնք Յաւելման և Բարձման.

3. Բազմապատկութեան և Բաժանման աղիւսակները սորվեցունել մինչև 10×10 .

4. Տամնաւոր և հարիւրաւոր թիւեր բազմապատկել միաւոր թիւերով: Տամնաւոր և հարիւրաւոր թիւերը բաժնել այնպիսի միաւոր թիւերով որոնք բաժանելիներուն ճիշդ բազմապատիկներն ըլլան.

5. 1—100 թիւերէն ո և է բաժանմական թուոյ մը $1/2\text{ը}$, $1/3\text{ը}$, $1/4\text{ը}$, $1/5\text{ը}$, $1/6\text{ը}$, $1/8\text{ը}$, $1/9\text{ը}$, $1/10\text{ը}$ գոտնել.

6. Երկայնութեան, պարունակութեան և կշռոյ տեղական չափերը ծանօթացնել տղուն՝ իրենց գլխաւոր բազմապատիկներով ու ստորաբաժանումներով. — Վարժութեան համար գործնական խնդիրք որոնց մէջ մանեն մէկ կամ երկու գործողութիւններ.

7. Տամնորդական Կոսորակ. — Մէդրին միջոցաւ սորվեցունել երկու թուանշանով տամնորդական թիւեր գրել ու կարդալ. — Յաւելում և Բարձում տամնորդականաց:

Երկրաչափութիւն. — 1. Շրջանակ և աղեղ, աստիճան, շառաւիղ, տրամագիծ, են.

2. Անկիւններ. Ուղիղ անկիւն, սուր անկիւն, բութանկիւն. — Ուղիղ անկիւնին հետ բաղդատել միւսները:

Ե. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Թուաբանութիւն. — 1—1000 թիւեր. 1. Սոյն թիւերուն մշակութիւնը ըստ նախընթաց տարիներուն՝ ամբողջական թուոց Զորս Գործողութեամբ.

2. Տամնորդական թիւեր գրել ու կարդալ մինչեւերեք թուանշանով. — Զորս Գործողութիւնք տամնորդական թիւերով.

3. Հասարակ Կոսորակաց վրայ վարժութիւնք Յաւելման և Բարձման:

Երկրաչափութիւն. — 1. Կանոնաւոր և անկանոն բազմանկիւններու մակերեւոյթները չափել. — Բոլորակի մը մակերեւոյթը չափել.

2. Գետիններու, պատերու մակերեւոյթները չափել:

Տոմարակալութիւն. — Ստացուած հաշուական ծանօթութեանց կիրաւումամբ կազմել առանին և գիւղատնական հաշուետեարներ:

Զ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Թուաբանութիւն. — 1. Ամբողջական թիւերով գործական խնդիրք.

2. Տամնորդական Կոսորակով Զորս Գործողութեանց վրայ գործնական խնդիրք՝ երեք թուանշանէ աւելի պարունակող թիւերով.

3. Հասարակ Կոսորակով Զորս Գործողութեանց վրայ գործնական խնդիրք.

4. Միութեան կանոնով լուծելի խնդիրք տոկասի և գեղի վրայ:

Երկրաչափութիւն. — Ծաւալները չափելու միութիւն. — Խորանարդի, պրիմակի, գլանի ծաւալները չափել. — Անոնց կիրառումը գիւղատնտեսական կեանքի մէջ:

Տաճարակալութիւն. — Գիւղատնտեսի հաշուական գործառնութիւնները արձանագրել տոմարներու մէջ. — Հաշուական ցուցակներ պատրաստել:

Ժ. Ա.Յ.Բ.Ե.Ն. ի Լ.Ե.Զ.Ա.Ի

Ա. ՏԱՐԵԾՈՎԱՆ

Ամէն դասի առթիւ պիտի կատարուին լեզուի վարժութիւնք որոնց նպատակը պիտի ըլլայ կարելի եղածին չափ ուղիղ խօսիլ սորվեցունել աղուն:

1. Վայելչախօսութիւն. — Խօսակցութիւններ մանուկին և ուսուցչին միջեւ:

Մանուկը շատ պարզ տեղեկութիւններ պիտի տայ պատմուած զրոյցի մը, կատարուած պատյափի մը և աւանդուած դասի մը վրայ:

2. Լեզուի վարժութիւններ. — Ասոնց նպատակը պիտի ըլլայ աղուն ծանօթացնել այն բառերը որոնք ցոյց կուտան անձերու, կենդանիներու և իրերու անուններ, անոնց կատարած գործողութիւնները և անոնց յատկութիւնները:

3. Հնրեցման նախապատրաստութիւն. — Վանկերը վերլուծել ձայններու և յօդաւորմանց. — Զայնաւորք:

4. Արտասանութիւն. — Դիւրահասկնալի բանաստեղծութիւններ, յետ բացատրութեան, դոց սորվեցունել:

Բ. ՏԱՐԵԾՈՎԱՆ

Վայելչախօսութիւն. — Կարճ խօսակցութիւններ կամ տեղեկատութիւնք իրադիտութեան և Տեղական Աշխարհագրութեան գասուց վրայ:

Իրադիտութեան դասերուն հետ առնչութիւն ունեցող սոոյզ կամ շինծու դիպաց պատմութիւն:

Այս դասերէն քաղուած առածներու ՚ի բերան ուսում:

Հնրեցմանութիւն. — Նախապատրաստական ուսում լեզուի ձայնական տարերաց. — Զայն և յօդաւորում. — Խոսքեր, բառեր, վանկեր վերլուծել ձայնական տարերքներու:

Զայնական միթոսով շինուած քերտկանի մը վրայէն ընթերցման վարժութիւն. — Կարդացուած բառերը գրել. — Տպագրական տառերու ուսում. — Կարճ և զիւրին բանաստեղծութեանց արտասանութիւն:

Բառագիտութիւն և Ռուղագրութիւն. — Գրատախականին վրայ և քերտկանին մէջ կարդացուած բառերու վրոցագրութիւն. — Իրադիտութեան և ընթերցմանութեան դասերէն քաղուած բառեր դասաւորուած նիւթի կարգով, իրենց տեսակին համամատ:

Պիտագրի և ուղղագրական նշաններու գործածութիւն:

Անուններու եղակին ու յոդնակին որոշել իրենց վերջաւորութենէն:

Անձերու, կենդանիներու և իրերու անուններ. — Յատկութիւն և գործողութիւն ցուցնող բառեր:

Գ. ՏԱՐԵԾՈՎԱՆ

Վայելչախօսութիւն. — Բնական Պատմութեան և Տեղական Աշխարհագրութեան ծրագրին պարունակած

առարկաներուն վրայ խօսակցութեան շարունակութիւն։
Հատընափր բարոյալէպեր։—Աշակերտաց հասողութեան յարմար կենսագրութիւններ։

Էնթերցանուրիւն։—Էնթերցում և տեղեկատութիւն։—Գլխաւոր գաղափարներու ցուցում։—Խորհրդածութիւն և բարոյական եզրակցութիւն։—Նոր եզրերու ուսում՝ նշանակութեան և ուղղագրութեան տեսակէտով։

Դիւրին հասուածներու արտասանութիւն։

Բառագիտուրիւն և Ուղղագրուրիւն։—Դասերէ քառուած և իրենց նշանակութեան կամ իրենց տեսակին համեմատ խմբուած բառեր։

Էնթերցանութեան և իրագիտութեան դասերէն առնուած պարզ եւ կարճ զրուցազրութիւնք։

Նախադասութեան մէջ որոշել անունը, ածականը, բայը, գերանունը՝ առանց մանրամասնութեան։

Բային՝ իր ենթակային հետ համաձայնութիւնը թիւով և դէմքով։

Դ. ՏԱՐԵՆԹԱՆ

Վայելյախօսուրիւն եւ Շարադրուրիւն։—Տերանացի և գրաւոր տեղեկատուութիւն կարդացուած կամ սորվուած նիւթոց վրայ։—Արուագծին արտագրումը, և պատրաստութիւնք շարադրական ուղղագրական կըրկին տեսակէտով։

Տերանացի դիպախօսութիւնք (narration) և նկարագրութիւնք որոնք համապատասխան ըլլան ծրագրին նիւթոց։

Էնթերցանուրիւն։—Միւս դասերուն հետ առընչակից հասուածներու ընտրութիւն։—Համառօտ կերպով սորվեցունել անոնց իմաստն ու բացարութեան ձեւեւ-

րը։—Նիւթին բնական բաժանումներուն համեմատ տեղեկատուութիւն։—Քիչ ծանօթ եղող եզրերու բացատրութիւն։—Հատուածին յատակազիծը։

Բառագիտուրիւն և Ուղղագրուրիւն։—Էնթերցանութեան և իրագիտութեան դասերէն քաղուած և նիւթերուն կարգովը խմբուած բառեր։

Նախապէս կարդացուած և վերլուծուած բնագիրներէն քաղուած զրուցազրութիւնք։

Քերականուրիւն։—Պարզ նախադասութիւն։—Իրէական մասերը։—Նախադասութեան մէջ որոշել յատուկ և հասարակ անունները, որակական, ստացական, ցուցական, թուական ածականները։—Էական բայ։ միւս բայերուն տարրերութիւնը և նմանութիւնը հական բային բաղդատամամբ։—Հոլովում անունի և գերանունի։—Խոնարհում էական բայի և Առաջին լծորդութեան բայերու, Սահմանական, Հրամայական և Ստորադասական եղանակներուն զլիսաւոր ժամանակներովը։

Ենթակայ և խնդիր եղող անունի տեղ գործածել գերանուն։

Գրաւոր և բերանացի քերականական հրահանգներ երբ կիսարութիւն ուսուցուած նիւթոց։

Ե. ՏԱՐԵՆԹԱՆ

Վայելյախօսուրիւն և Շարադրուրիւն։—Նախընթացիրահանգները շարունակել։—Կարճ շարադրութիւններ ըերանացի, միամսնաբար պատրաստուած։—Էնդլայնում նիւթի մը՝ հետեւողութեամբ ուրուագծին զոր առաջուց պատրաստած հն աշակերտք։—Պատմական, կենսագրական, աշխարհագրական և բնապատմական նիւթեր։

Էնթերցանուրիւն։—Միւս դասերուն առնչակից նիւթեր։—Վերլուծում խմբատին, բացարութիւն զլիսաւոր

կէտերուն, բաղդատութիւն.—Բարոյական խրամներ և գործնական կիրառմունք :

Հատընտիր հատուածոց արտասանութիւն :
Բառագլուրիւն եւ Ռւղղագրուրիւն . — Նախընթաց հրահանգներու շարունակութիւն :

Բառերն ու ասացուածքները դասաւորել իրենց քերականական տեսակին, իրենց նշանակութեան և իրենց գործածութեան նայելով :

Ածանցումներու վրայ պարզ հրահանգներ :

Կիրառիկ զրուցագրութիւնք :

Քերականուրիւն . — Նախադասութեան ուսման շարունակութիւնը . — Այլևայլ տեսակ խնդիրները որոշել տալ (Սեփի խնդիր, Բնուրեան խնդիր, Տեղի և Ժամանակի պարագայ ցուցնող խնդիրներ). — Ներդործական, Գեղոք, Կրառորական բայերու զանազանում . — Նախադասութեան զրական, Ժիտական, հարցական ձեւը . — Շրջում :

Նախադասութեան մէջ որոշել Յետադրութիւնը և Մակրայը, Դերանուններուն անսակները :

Խոնարհում կանոնաւոր բայերու . — Նախադասութեան մէջ ստորակէտի գործածութիւն :

Զ. ՏԱՐԵՇԹՁԱՆ

Վայելչախօսուրիւն եւ Շարադրուրիւն . — Շարունակութիւն շարադրական հրահանգայ՝ բերանացի և զրաւոր . — Բնտաննեկան նամակներ :

Բարոյական նիւթեր՝ մանրավէսով մը կամ բարոյավէսով մը լուսաբանուած :

Բնրեցանուրիւն . — Հատուած մը կամ զլուխ մը բաժնել մասերու որոնց ասէս մէկը համապատասխանէ գլխաւոր գաղափարի մը : Մասնաւոր բացատրութեանց ուսում :

Հատընտիր հատուածոց արտասանութիւն :

Բառագլուրիւն եւ Ռւղղագրուրիւն . — Բնթերցանութեան, Բնական Պատմութեան, Աշխարհագրութեան կամ Պատմութեան դասերէն քաղուած բառեր :

Կազմութիւն և վերլուծում բառերու : Արմատ բառեր և ամենէն գործածական մասնիկներ :

Կիրառական զրուցագրութիւնք :

Քերականուրիւն . — Պարզ նախադասութեան ուսումը ամբողջացնել . — Նախադասութիւն մը որուն ամէն մէկ էակն մասերը ունենան լրացուցիչ բառեր :

Շաղկապ և Զայնարկութիւն : Յարարերական Դերանուն . կէտադրութիւն :

Ցերանացի և զրաւոր խոնարհում կանոնաւոր և Անկանուն Բայերու :

Ցերանացի և զրաւոր հոլովում Անուններու և Դերանուններու :

Ժ Ա. Յ Ա Մ. Լ Ե Զ Ա Խ

Գ. ՏԱՐԵՇԹՁԱՆ

1. — Խօսակցութիւն եւ Արտասանութիւն . — Առարկաներու վրայ խօսակցութիւն ուսուցչին և աշակերտին միջնէ :

Ուսուցիչը մանրավէսպեր կամ գիպագրութիւններ կը պատմէ աշակերտին 'ի լուր, և աշակերտը կը կրկնէ :

Կարծ առածներ, հատուածներ գոց կը սորվի տղան ունինդրութեամբ միայն :

2. Գրել եւ կարդալ . — Ցերական մը որ պատրաստուած ըլլայ ձեռագիր և տպագիր տառերով :

3. — Ռւղղագրել . — Կարդացուած դասէն 4—6—8—10 բառերու ուղղագրութիւնը սորվի :

Ե. ՏԱՐԵՇԹԱՆ

1. Խօսակցութիւն եւ Արտասանութիւն . — Շարունակութիւննախընթաց տարիին համաձայն .

2. Գիր եւ Ընթերցում . — Զեռագիր և տպագիր տառերով պատրաստուած դասագիրք մը . — Թարգմանութիւն .

3. Ուղղագրութիւն . — Բնթերցման հատուածէն 2—4—8 տող սորվիլ զրուցագրութեամբ գրելու համար .

4. Պատօնական գրութիւն . — Պարզ մուրհակներ, անպարտագիրներ, ևն գոյ սորվիլ և գրել :

Զ. ՏԱՐԵՇԹԱՆ

1. Խօսակցութիւն եւ Արտասանութիւն — Շարունակութիւնը ըստ նախընթաց տարիներու .

2. Գիր եւ Ընթերցում .

3. Ուղղագրութիւն եւ Շարադրութիւն . — Մանր պատմուածքներ շարադրել, նիւթը նախասիրաբար ընթերցանութեան դասագիրքէն առնուած . — Բնթերցման հատուածէն 6-8-10 տող սորվիլ և զրուցագրել .

4. Պատօնական գրութիւն . — Շարունակութիւննախընթաց տարւոյ դասագրքին՝ ամէն մէկ գրութեան առթիւ բացատրելով այդ գրութեան հանգամանքը :

ԺԲ. Ա. Ջ. Գ. Ե Ի ՕՍՄ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ. ՏԱՐԵՇԹԱՆ

1. Բնառանիքին պատմութիւնը .

2. Գիւղին պատմութիւնը . օգուտ քաղել յիշատակարաններէն, եթէ կան :

3. Նահանգին պատմական անցքերը, ջանալով օգուտովիլ յիշատակարաններէն, եթէ կան :

Ե. ՏԱՐԵՇԹԱՆ

Ա. Ջ. Գ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

- | | |
|----------------------|-----------------------------|
| 1. Հայկ և Բէլ, | 8. Աշոտ Գ. Ողորմած, |
| 2. Արամ, | 9. Գագիկ Ա. — Անի քաղաք, |
| 3. Արայ Գեղեցիկ, | 10. Ռուբէն Ա. հիմնադիր հայ- |
| 4. Վաղարշակ, | կական իշխանութեան, |
| 5. Տրդատ և Գր. Լուս. | 11. Լևոն Զ. |
| 6. Սահակ եւ Մեսրոպ, | 12. Լէնկթիմուր և Շահաբաս; |
| 7. Աշոտ Բ. Երկալթ, | |

Զ. ՏԱՐԵՇԹԱՆ

Ազգ. Պատմութիւն

- | | |
|--|--|
| 1. Հայաստանի ներքին կեանքի պայմանները՝ հին դարերուն . | 2. Ներքին կեանքի պայմանները՝ հեթանոս Արշակունեաց ժամանակ . |
| 3. Քրիստոնէական գրականութեան սկիզբը և բարգաւաճումը . | 4. Արաբական աղգեցութիւնը մեր գրականութեան վրայ . |
| 5. Կիլիկիա . — Ներքին պայմանները եւ գրականութիւնը՝ Ռուբինեանց օրով . | |

6. Հայոց գաղթականութիւնները (բռնի և կամաւոր) .

7. Օսմանցւոց և Պարսից պատերազմները Հայաստանի տիրապետութեան համար .

8. Հայոց յարաբերութիւնները Ռուսաց հետ . — Ռուսաստանի Հայք (Էջմիածին, Կաթողիկոսութիւն) .

9. Թուրքիոյ Հայք . — Պատրիարքութիւն կ. Պոլսոյ . — Թանգիմաթ . — Ազգ . Սահմանադրութիւն . — Յեղափոխական շարժում . — Օսմ. Սահմանադրութիւն :

ՕՄՄ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Օսմանցւոց ծագումը .

2. Անատոլուի մէջ իրենց ծաւալումը (Պրուսա) .

3. Բումէլիի մէջ իրենց մուտքն ու ծաւալումը (Էտիլինէ) .

4. կ. Պոլսոյ առումը .

5. Ենիչերիներու գունդին կազմութիւնը և ջնջումը .

6. Թուրքիոյ վիճակը Սուլթան Մահմուտի, Մէծիտի, Ազիզի, Մուրատի և Համբատի օրով . — 1876ի Օսմ. Սահմանադրութիւնը և 1908ի Սահմանադրութիւնը :

ԺԴ. ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Դ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Հագուս եւ ձերմակելին . — Հագուսաներու արուելիք իննամք ամրան և ձմրան մէջ . — Լուացքի համար ամենակարեւոր եղած գործիքներ, անօթներ . — Լուացման նիւթեր (աճառ, սօտա, կաւ, ևն) . — Օսլայում և արդուկում :

Ե. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Բնակարան . — Ընարութիւն և պահպանութիւն բընակարանի . — Կարասիներու արուելիք իննամք . — Խոհանոց . պղնձեղէնք և կաղմածք . — Տնական պաշարներ . անոնց պատրաստութեան և պահպանութեան դիւրագնի և առողջապահական միջոցներն ու եղանակները :

Զ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Հիւանդապահութիւն . — Հիւանդին սենեակը, անորոգափոխութիւնը, ջեռուցումը . — Հիւանդին հագուստն ու անկողինը . — Կերակուրը, ըմպելիքը, գեղաջուրերը, ևն . — Առանձին դեղարան . — Պատահարաց միջոցին նախական իննամք :

ԺԴ. ՔԱՂԱՔԱԳՈՎՈՒԹԻՒՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ԾԱՆՈՑՈՒԹԻՒՆ Պ. Եւ Զ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Գիւղախումբ . Ոստիկան, ապահովութիւն . — Հարկահաւաք, Ծերոց ժողով, տուրք, նպատակը : — Գիւղապետ, հակողութիւն, բարեգարդութիւն, վէճեր կամ դատեր, ձերբակալութիւն, բանա:

Եկեղեցի, Թաղական Խորհուրդ, ընարութիւն :

2. Գաւառակ . — Կաղմակերպութիւնը ըստ վերնոյն. Գայմադամ :

3. Գաւառ . — » » »

Միւթէսարք :

4. Նահանգ . — » » »

Վայի :

Առաջնորդական փոխանորդ :

Առաջնորդ . — Գաւառական վարչութիւն :

Պատրիարք . — Կեղրոնական վարչութիւն :

5. Տնօսագիտական պարզ խօսակցութիւնի կամ ընթեցմունիք . — Եկամուտ, տոկոս, թոշակ, գրամ, վարկ, Դրամատուն, Խնայողական մնտուկ, Ապահովագրական և Գործակցական ընկերութիւնք :

ԺԵ. ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Օղահիւս (Դրիգոյ) . — 1. Շինել 30-40 օղակով երիզ մը վարժութեան համար . այդ երիզին վրայ գործել տալ հետզետէ, 8-10 մնդմ. երկայնքով, հետեւեալ ասեղները. Ա. Հիւսել առանց թել առնելու . — Բ. Հիւսել շիտակէն . — Գ. Հիւսել հակառակ կողմէն . — Դ. Հիւսել մէկ մը շիտակէն, մէկ մը հակառակէն . — Ե. Հիւսել պակսեցնելով :

ԾԱՆՈԹ . — Վարժուհին կ'սկսի երիզները որոնց համար կը գործածուի անլուայ բամպակ :

2. Կար . — Քանավայի վրայ զարդասեղներ . — Հաստ կտաւի կամ էդամինի վրայ կարի պարզ և դիւրին վարժութիւն գունաւոր թելով (Ծուլլալ, թերակար (իշխանի), երկու կտորի վրայ չուլլալ) :

3. Զեւ . — Ուղիղ գիծեր քաշելու վարժութիւն առանց քանակի, այլ եւ այլ երկարութեամբ :

Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Օղահիւս . — Գուրպայի երկու սրունք՝ կրունկի երիզով . Վարժուհին կ'սկսի գուրպաները :

2. Կար . — Հաստ կտաւի վրայ շարունակութիւն

կարի վարժութեանց . — Յետկար (մամրադա) . — Քանավայի վրայ թելզիր :

3. Զեւ . — Բեկեալ և կոր գիծեր քաշելու վարժութիւնք :

4. Յօրինում . — Թաշկինակ, դպրոցականի պարզ թեանց . կտաւէ քառակուսի կտոր մը պատրաստել, որ յարմար ըլլայ գործածուելու իբր գոգնոց և կամ իբր անձեռոց :

Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Օղահիւս . — Զոյդ մը գուրպայ . պարզ շլթայիկ դոր կը շարունակէ աշակերտուհին և կ'ամրողացնէ :

2. Կար . — Խծիպ (լայն), թելզակ (բէյկ), հաստ կտաւի վրայ :

3. Զեւ . — Կաղապարներու վրայէն բնդօրինակել ձեւագծումներ որոնց մէջ գտնուին կոր գիծեր :

4. Յօրինում . — Քանավայի վրայ թելզիր . — Զեռագործի զրպանիկ՝ 80 մնդմ. երկայնքով և 40 մնդմ. լայնքով :

Դ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Օղահիւս . — Զոյդ մը գուրպայ (իրկին շղթայիկ) բոլորովին աշակերտուհին ձեռքով շնուռած՝ վարժութիւն ցուցումներուն հետեւողութեամբ :

2. Կար . — Վարժութիւնք հասարակ կտաւի վրայ . Կետկար (մելենայի կար), եղերակար (յավալորիկ), գոյգ շուլլալ (պարկի համար զործածելի), ծալկար (իծիս շուլլալ) :

3. Զեւ . — Վարժիք, շաղիկ՝ 2—5 տարեկան տղոց համար :

4. Յօրինում . — Մէկ կառուղ չապիկ՝ 2—5 տարե-
կան տղոց համար , օձիքը խծիպով :

5. Կարկտութ . — Հաստ կտաւի վրայ մաշած տեղը
լեցնելու պարզ վարժութիւն (խանութպանի գողեց):

Ե. ՏԱՐԵՇՆԱ

1. Օղակիւս . — Զոյգ մը գուրապայ՝ ամբողջովին
աշակերտուհին ձեռքով շինուած :

2. Կար . — Նախորդ վարժութեանց կրկնութիւն .
փոթ քաշել , ժապաւէն փակցնել , կերպաս մը ժապաւէ-
նով եղերել , կոճակ փակցնել , լամբակ և օղակ շինել ,
ձերմակեղենի նշանագիր :

3. Չեւ . — Մանկիկի չապիկ ու սովորական չապիկ
աշակերտուհին համար :

4. Յօրինում . — Սովորական չապիկ աշակերտու-
հին համար . — Օձիքը զարդարել :

5. Կարկտութ . — Հաստ կտաւի վրայ մաշած տեղը
լեցնել ԴՐԱՅԻՇԱԳՐՈՒԹԻՒՆ կտոր դնել . — Մաշած եղերքի
անունը ԱՌԱՎԱՆ ԲԱՅԼԻԱՏ

7/1-1922 Զ. ՏԱՐԵՇՆԱ

6. ԱԽՈՐԻՄ ԱԽՈՐԻՄ Զարդանեղով զոյգ մը գուրապայ :
ԱՅՑԱՅԻՆՅԱՅԻՆ քաշել , փոթը կտորի վրայ առնել ,
անցէնք (լամպ , լարի մամբայ) , չապիկի վրայ նշանա-
գիր դնելու յատուկ զարդասեղներ (փշակար , խաչկար ,
շրայակար) :

3. Չեւ . — Պղտիկ տղու իրանազգեստ , կրծկալ ու
պղտիկ աղջկան չապիկներ (լարտիկ) :

4. Յօրինում . — Աղջկան չապիկներ (շիտակ զօտիով) :

5. Կարկտութ . — Թանէլա հագուստներու վրայ մաշած
տեղերը լեցնել , կտոր դնել . — Գուրապայի նորոգութիւն :



NL0216768

53.823